ИНГОАРМЕНИЯ
IngoArmenia

16 ապրիլի, 2018թ.
Ը 0699 - 18

Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամ
Տնօրեն
Աշոտ Կիրակոսյանին

Հարգելի պարոն Կիրակոսյան,

Օգտվելով առիթից՝ հղում եմ Ձեզ խորին հարգանքներիս հավաստիքը և շնորհակալություն հայտնում Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամի աշխատակիցների առողջության ապահովագրությունը «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ընկերությանը վստահելու համար:

Մեր կազմակերպություններն արդեն երեք տարի հաջողությամբ համագործակցում են, և ես լիահույս եմ, որ Ձեր և Ձեր աշխատակիցների սպասելիքներն արդարացվում են:

Հիմք ընդունելով մեր կազմակերպությունների միջև 14.04.2017թ. կնքված առողջության ապահովագրության թիվ MM401365 պայմանագրի 3.2 ենթակետը՝ սույնով հաստատում եմ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի համաձայնությունը նույն պայմաններով շարունակել Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամի աշխատակիցների առողջության ապահովագրությունը: Տարեկան ապահովագրավճարը մեկ անձի համար կմնա անփոփոխ և կկազմի 120,000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Սույն գրությանը կից ներկայացվում է 16.04.2018թ. դրությամբ Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամի ապահովագրված աշխատակիցների ցանկը: Առաջարկված պայմաններով ապահովագրությունը շարունակելու Ձեր համաձայնության դեպքում խնդրում եմ հանձնարարել համապատասխան աշխատակիցներին տեղեկացնել մեզ ցուցակում տեղի ունեցած փոփոխությունների մասին (առկայության դեպքում):

Որպես տեղեկատվություն կից ներկայացնում եմ նաև վերը նշված պայմանագրի շրջանակներում «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի կողմից վճարված հատուցումների գումարը 20.04.2017 – 15.04.2018թթ. ժամանակահատվածի համար:

Շարունակական համագործակցության ակնկալիքով:

Հարգանքով՝
Արևշատ Մելիքսեթյան
Գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010,
Հանրապետության 51, 53,
տարածք 47, 48, 50
հեռ. +(37410) 592121
Ֆաքս +(37410) 547506
էլ-փոստ info@ingoarmenia.am
վեբ կայք www.ingoarmenia.am